Արցախից բռնի տեղահանվածների իրավունքների պաշտպանության ՔՀԿ-ների ցանցի կառավարման խորհրդի նիստի արձանագրություն N 1

(Կազմված է 12.03.2024թ.-ին, բաղկացած է 2 էջից, կառավարման խորհրդի նիստը անցկացվել է 12.03.2024թ.-ին՝ հիբրիդ (առկա և առցանց) ձևաչափով:

Ցանցի կառավարման խորհրդի նիստին մասնակցում էին «Հարմոնիա» շուշեցի կանանց ՀԿ-ի գործադիր տնօրեն Ջուլետտա Առուստամյանը, «Կռունկ» արցախահայերի իրավունքների պաշտպանության ՀԿ-ի նախագահ Մարիամ Ավագյանը, «Վերադարձ դեպի Քաշաթաղ» ՀԿ-ի լիազոր ներկայացուցիչ Անահիտ Քոսակյանը, «Վերադարձ դեպի Քարվաճառ» ՀԿ գործադիր տնօրեն Դավիթ Եղիազարյանը, «Կումայրի» արցախահայերի ՀԿ-ի գործադիր տնօրեն Արտավազդ Խանդոյանը, նույն կազմակերպության ներկայացուցիչ Արմեն Չոմոյանը, «Հադրութի դեօկուպացիա» ՀԿ-ի գործադիր տնօրեն Մերի Դավթյանը, «Ասկերանցիներ» համայնքի զարգացման կենտրոն ՀԿ-ի նախագահ Ալլա Արզումանյանը, «Հայը կա» սոցիալական, անվտանգային և զարգացման ՀԿ-ի նախագահ Արազ Բաղդասարյանը, Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ Կարեն Զադոյանը: Համաժողովին հեռավար եղանակով մասնակցում էին նաև «Վերադարձ դեպի Դիզակ» ՀԿ-ի գործադիր տնօրեն Մարգարիտա Քարամյանը, «Շուշիի դեօկուպացիա» ՀԿ գործադիր տնօրեն Ալվինա Ներսեսյանը, նույն կազմակերպության ներկայացուցիչ Արմինե Հայրապետյանը և Արցախի ժողովրդական դիվանագիտության ինստիտուտի նախագահ Իրինա Գրիգորյանը:

Օրակարգ-

1. Արցախից բռնի տեղահանվածների իրավունքների պաշտպանության ՔՀԿ-ների ցանցի կառավարման խորհրդի նախագահի ընտրություն:
2. Պետական մարմինների ցանկի ճշտում և Ցանցի հետ հանդիպումների պլանավորում:
3. ՀՀ-ում արցախահայերի բնակության հիմնական վայրերի պարզում և Ցանցի այցելությունների պլանավորում:

Քվեարկեցին - Կողմ - 12, ձեռնպահ - 0, դեմ - 0

Քննարկվող հարց - 1. Կառավարման խորհրդի նախագահի ընտրություն:

Զեկուցող- Կարեն Զադոյան, ով հայտնեց կառավարման խորհրդի նախագահի հետ ամենօրյա ակտիվ համագործակցության անհրաժեշտության մասին, պարզաբանեց կառավարման խորհրդի նախագահի գործառույթները և ներկա մասնակից ՀԿ-ներից որևէ մեկի նախագահին առաջարկեց ինքնաառաջադրվել որպես կառավարման խորհրդի նախագահ:

Արտահայտվեց- «Հարմոնիա» շուշեցի կանանց ՀԿ գործադիր տնօրեն Ջուլիետտա Առուստամյանը՝ առաջարկելով իր թեկնածությունը և պատրաստակամություն հայտնեց արցախահայերի խնդիրների լուծման նպատակով արդյունավետ և ինտենսիվ կերպով համագործակցել:

Որոշվեց - 1.Արցախից բռնի տեղահանվածների իրավունքների պաշտպանության ՔՀԿ-ների ցանցի կառավարման խորհրդի նախագահ ընտրել «Հարմոնիա» շուշեցի կանանց ՀԿ գործադիր տնօրեն Ջուլիետտա Առուստամյանին:

Քննարկվող հարց – 2. Պետական մարմինների ցանկի ճշտում և Ցանցի հետ հանդիպումների պլանավորում:

Զեկուցող - Կարեն Զադոյան, ով բարձրաձայնեց արցախահայերրի խնդիրների

	լուծման նպատակով պետական մարմինների հետ հանդիպումներ կազմակերպելու անհրաժեշտության մասին և ներկա մասնակից ՀԿ-ների ներկայցուցիչներին առաջարկեց ներկայացնել պետական մարմինների ցանկ, որոնք կարող են աջակցություն ցուցաբերել արցախահայերի խնդիրների լուծմանը:
Արտահայտվեցին-	«Հաղրութի դեօկուպացիա» ՀԿ-ի գործադիր տնօրեն Մերի Դավթյանը առաջարկեց հանդիպել նաև ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցիչ Եղիշե Կիրկոսյանի հետ միջազգային իրավունքի ոլորտում օժանդակություն ստանալու նպատակով: Կառավարման խորհրդի մյուս անդամները նույնպես ներկայացրեցին հնարավոր աջակցություն տրամադրող պետական մարմինների ցանկը, ինչպես նաև կողմ արտահայտվեցին և պաշտպանեցին զեկուցողի ներկայացրած առաջարկը:
Քվեարկեցին -	Կողմ - 12, ձեռնպահ - 0, դեմ – 0
Որոշվեց -	**2. Առաջարկել Ցանցի քարտուղարությանը ամբողջացնել պետական մարմինների ցանկը, նախագծել աշխատանքային հանդիպումների ժամանակացույցը և դրանք ներկայացնել Ցանցի կառավարման խորհրդին:**
Քննարկվող հարց-	**3. ՀՀ-ում արցախահայերի բնակության հիմնական վայրերի պարզում և Ցանցի այցելությունների պլանավորում:**
Զեկուցող-	Կարեն Զաղոյան, ով պարզաբանեց, որ Երևանի և դրան հարակից համայնքների ղեկավարներին ուղարկվել են հարցումներ ՀՀ-ում արցախահայերի բնակության հիմնական վայրերի պարզման վերաբերյալ: Ամփոփելով վերոնշյալ հարցումների պատասխանները՝ առաջիկայում պլանավորվում է կազմել քարտեզ՝ շրջիկ այցերի ձևով արցախցիներին իրավաբանական աջակցություն տրամադրելու նպատակով:
Արտահայտվեցին-	Ցանցի կառավարման խորհրդի անդամները, որոնք կողմ արտահայտվեցին և պաշտպանեցին զեկուցողի ներկայացված առաջարկը:
Քվեարկեցին –	Կողմ - 12, ձեռնպահ - 0, դեմ – 0
Որոշվեց-	**3. ՀՀ-ում արցախահայերի բնակության հիմնական վայրերի վերաբերյալ Երևանին հարակից համայնքների ղեկավարներին ուղարկված հարցումների արդյունքերով պարզ դարձած տեղեկությունների հիման վրա կազմել տեղեկատվական քարտեզ և դրա հիման վրա պլանավորել Ցանցի շրջիկ այցեր՝ արցախահայերին իրավաբանական աջակցություն տրամադրելու նպատակով:**

Ցանցի կառավարման խորհրդի նախագահ՝ Զուլետտա Առուստամյան

Ցանցի գլխավոր քարտուղար՝ Կարեն Զաղոյան